ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/333

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարանի
Մասնակից՝ «Ղահրաման» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.12.2021թ.-ի թիվ 26/26-1/19954-2021 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.11.2021թ.-ի թիվ 01/61-29586 գրության հիման վրա, 06.12.2021թ.-ին «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 06.12.2021թ.-ին:

07.12.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/333 համարի ծածկագիրը:

15.12.2021թ.-ին, 24.12.2021թ.-ին և 30.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.12.2021թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 29.11.2021թ.-ի թիվ 75 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով կենտրոնացված կարգով իրականացվող սննդամթերքի հնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Բնական Բարիքներ» ՍՊԸ-ն և «Ղահրաման» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 16-րդ, 20-րդ, 22-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Բնական Բարիքներ» ՍՊԸ-ն, 8-րդ, 14-րդ չափաբաժինների մասով «Ղահրաման» ՍՊԸ-ն:

«Բնական Բարիքներ» ՍՊԸ-ն իր 23.11.2021թ.-ի գրությամբ հրաժարվել է ընթացակարգի 16-րդ չափաբաժի մասով պայմանագիր կնքելուց:

«Ղահրաման» ՍՊԸ-ն իր 24.11.2021թ.-ի գրությամբ հրաժարվել է ընթացակարգի 14-րդ չափաբաժի մասով պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետը, գնման ընթացակարգը 14-րդ և 16-րդ չափաբաժինների մասով հայտարարել է չկայացած:

Վերոգրյալ իրավական հիմքով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետով, առաջարկում եմ մասնակիցների նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է Երևանի քաղաքապետարան-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ ընթացակարգի մասնակից՝ «Ղահրաման» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Ղահրաման» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.12.2021թ.-ին գրությամբ դիմել է «Ղահրաման» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.12.2021թ.-ի թիվ 26/26-1/19954-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/333 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման նպատակով 25.10.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Աճուրդ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

iii. «Ղահրաման» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 5 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ 8-րդ և 14-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

v. 08.11.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

vi. «Ղահրաման» ՍՊԸ-ն 24.11.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ տեխնիկական խնդրի պատճառով հրաժարվում է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով մրցույթի շրջանակներում կնքվելիք պայմանագրի 14-րդ չափաբաժնում (կաթնաշոռ) ներառված ապրանքից, քանի որ էլեկտրոնային աճուրդի ընթացքում գինը մուտքագրվել է մեկ թվով պակաս: Մուտքագրված գնով անհնար է մատակարարել վերը նշված ապրանքատեսակի խմբաքանակը, և խնդրել է 14-րդ չափաբաժինը չներառել առաջարկվող պայմանագրի նախագծի մեջ:

vii. Հանձնաժողովի 25.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից 24.11.2021թ.-ին ներկայացված գրությունը, որոշել է 14-րդ չափաբաժնի մասով ընթացակարգ հայտարարել չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.12.2021թ.-ի թիվ 26/26-1/19954-2021 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների

կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման նպատակով 25.10.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 5 արձանագրության 2.1-րդ կետով «Ղահրաման» ՍՊԸ-ն 8-րդ և 14-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչով պայմանավորված 08.11.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր: Սակայն «Ղահրաման» ՍՊԸ-ն 24.11.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ Ընկերությունը հրաժարվում է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով մրցույթի շրջանակներում կնքվելիք պայմանագրի 14-րդ չափաբաժնում (կաթնաշոռ) ներառված ապրանքից, քանի որ էլեկտրոնային աճուրդի ընթացքում գինը մուտքագրվել է մեկ թվով պակաս: Մուտքագրված գնով անհնար է մատակարարել վերը նշված ապրանքը, և խնդրել է 14-րդ չափաբաժինը չներառել առաջարկվող պայմանագրի նախագծի մեջ:

Հանձնաժողովի 25.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից 24.11.2021թ.-ին ներկայացված գրությունը, որոշել է 14-րդ չափաբաժնի մասով ընթացակարգ հայտարարել չկայացած:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն, Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո հրաժարվելով «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.12.2021թ.-ի թիվ 26/26-1/19954-2021 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/333 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ղահրաման» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**